բնստան հետ Նեղոսի[1] ի Նինվէ եւ ի Պաղտատ գնայ։

Կացի անդ երկու շաբաթ. եկի դարձեալ հետ Մաղաքիայ վարդապետին[2] ի Սեւաստ եւ ի Թօխաթ. եւ անտի Ստամպօլ։ 195

11· ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՔ

Եւ կացի անդ (ի Կ· Պոլիս) ամ մի, աշխատելով եւ վաստակելով գրագրութեամբ, զի ժողովեցից պաշար սուրբ յԵրուսաղէմ գնալ, զի եւ անդ էի ուխտ արել։ Եւ Ստամպօլ գրագիրն խիստ խիյմաթ ունէր. եւ թէպէտ կարգաւորք շատ են, գրող չկայ. զի կարդալն այլ արվեստ է եւ գրելն այլ։ Եւ տվին ինձ յոլով գիրք գրել աշխարհականք եւ կարգաւորք եւ քահանայք։ Իսկ ես ջանայի եւ խայրաթ առնէի, եւ տգնէի ցայգ եւ ցերեկ· 5 10

---

[1] Պէտք է իմանալ «հետ Տիգրիսի»։

[2] Մաղաքիա վարդապետ ճշդիւ 1612ին Ամիդ կը գտնուէր· իր յանձնարարութեամբ կ'օրինակէ Յովհաննէս գրիչ Ն· Շնորհալւոյ Մեկնութիւնն Մատթէի· կ'աւարտէ «յամի ՌԿԲ (1613) թուին ի Համիթ մայրաքաղաքի ի դուռն Ս· Սարգսի զաւրավարին եւ սուրբ Կիւրակոսի··· ի վայելս գերապանծ բարուեւոյն··· տէր Մաղաքիա սատուածարան վարդապետին Թօխաթցոյ, յիշատակ իւրն եւ հօրն··· Թորոսին եւ մօրն Հռնարին եւ եղբօրն Լուսպարոնին եւ քվերն Զմրութին»· Ձեռ· Լ.Ջմ· 1245, թղ· 269բ· հմմտ· եւ Հանդ· Ամս·, 1932, էջ 454։ Կը պատմէ Գր· Դարանաղցի, թէ 1625ին այցելած է Վենետիկ եւ Հռոմ (էջ 382) եւ 1634ին «ծածկելով զինքն եւ մերկանալով յամենայնէ» առանձնացած է Վանայ կղզիներէն միոյն վրայ եւ հոն վախճանած (էջ 291)։ Իր նկարագրի մասին տես անդ, էջ 363—364։